Ինչպես հեղինակն է վկայում, պատ- մաստվածաբանական այս բարդ հիմնահարցի համակարգված վերլու- ծությունն ամենեւին էլ ինքնակապա- տակ չէ: Աշխատությունը շարադրելիս Զակոր արք. Գևճյանը հետամուտ է մի- ճաբանական այն հիմնախնդիրների վերլուծական արժեքումանը, որոնք, հեղինակի համոզմամբ, թելադրված են եղել երկու պարագայով: Նախ նրա համոզմամբ՝ ցանկացած «... զարգա- ցած մարդ պարտավոր է իմանալ իր հաւատի ու դատման վարդապետու- թեան ընդդիմադիրների կարծիքը: Ան- տեսելը կամ դրանք սրդելը ցույց կը տան միայն տեղաբնակները» (էջ 5): Իսկ շարժառիթներից երկրորդը եղել է այն, որ «Ցայդ մեր եկեղեցու կողմից համարեա ոչինչ չի գրուել Մարտին Լութերի մասին» (էջ 6): Այլ կերպ ա- սած՝ աստվածաբանական արժեքու- մանը համահավասար հեղինակն աշ- խատանքը գրել է նաեւ հայ ընթերցողի իմացական հետաքրքրությունները բավարարելու մտահոգությամբ: Այդ ամենով էլ պայմանավորված է աշխա- տության ընդհանուր ուղղվածությունը, այն է՝ դավանաբանական զարգացում- ների շրջանակներում վեր հանել եւ վերլուծական արժեքուման ենթարկել բողոքականության հիմնադիր հեղի- նակներից մեկի կենսագրությունու- թյան եւ վարդապետական ըմբռնում- ների հիմնական գծերը:

Այդ կապակցությամբ պետք է արձա- նագրել նաեւ դրվատելի այն փաստը, որ հիմնահարցի համակարգված արժեքու- ման միտումով՝ աշխատության ներա- ծակնում հեղինակն անդրադարձել է բարեփոխողական շարժմանը նախոր- դող շրջանի Գերմանիայի հասարակա- կան-բաղադրական եւ գաղափարական կացության, ինչպես նաեւ նախաբաբե- նորոգչական շարժման մի շարք ներկա- յացուցիչների (Պիեռ Վալդր, Ջոն Վիկ- իմֆ, Յան Զուս եւ ուրիշներ) հայացքների համեմատական ուսումնասիրությանը, որով բնարկվող հիմնահարցը ներկա- յացվել է իր պատմական ամբողջության եւ գաղափարական հաջորդականու- թյան ծիրում:

դանին է դրվել օբյեկտիվ ու հավապա- րակաշխմած մի ամփոփ աշխատանք:

Այդ ամենից դժվար էլ է հետեւեցնել, որ **հեղինակն ամենեւին էլ չի սահմանա- փակվել միայն բնադատական այն մո- տեցմամբ**, թե բողոքականությունը «շեղվել է ճշմարտությունից», որ հա- րանվանության որոշեգրած կեցվածքը դատապարտելի է ավանդական եկեղե- ցու դիրքերից: Զանի որ Լյութերական վարդապետության հիմնադրությունը «բողոքական տարբեր ճիւղատրումնե- րի խողովակով թափանցել են նաեւ հա- յութեան մեջ», օբյեկտիվ մոտեցմամբ Զակոր արք. Գևճյանը ոչ միայն հաջոր- դաբար բնական արժեքուման է են- քարկում Լյութերական բարեփոխու- թյան էությունը եւ դրա հետ կապված հավաստյալի ու հասարակական այլ պարագաները, այլեւ դա կատարում է համակարգված ամբողջական մեջ այն համոզումով, որ «... մեք երբեմն շատ բան կարող ենք սովորել նաեւ մեզ նման չմտածողների տեսակետներից եւ վարք ու բարքից» (էջ 5): Անուշիկ հայացքից հակասական թվացող այս պնդումը, սակայն, դառնում է միանգամայն տրա- մաբանական եւ օրինալի այն պարզ պատճառով, որ, ինչպես աշխատանքի բովանդակությունն ու ուղղվածությունն են ցույց տալիս, վերլուծական այդ մո- տեցումը հեղինակն ընտրել է մեկ հիմ- նական նպատակով. հայ ընթերցողին հնարավորություն ընձեռել մոտիկից ծանոթանալ «Մարտին Լութերի եւ ընդ- հանրապես բողոքականության առա- ջացման» հիմնախնդրին, նրանց փաս- տարկված կերպով ցույց տալ, որ «բո- լորովին սխալ կը լինի Լյութերական մտայնությամբ առաջնորդվելը», որով էլ հետամուտ լինել **գլխավոր մեկ այլ նպատակի** եւս. «... հայ ընթերցողը, ծա- նոթանալով այդ նիւթերի հետ, առանել սիրով ու գիտակցությամբ փարոյի իր սեփական եկեղեցուն» (էջ 6, ընդգծումը՝ հոլովածագրի):

Ըննարկվող աշխատության մեջ օբյե- տիվ է հավասարակշռված մեթոդաբա- նական այս մոտեցումը կարելով ու նաեւ ավանդական եկեղեցիների եւ բողո- քականության դավանաբանական, պաշ- տամունքային եւ ծիսաստվածաբանա- կան ըմբռնումների տարբերակիչ գծերը բացահայտելու եւ բնարքար արժեքներու տեսանկյունից: Այդ մտայնությամբ է հե-

պտեղ է կարելուել նաեւ այն, որ հետե- տղականորեն ներկայացնելով «Լյու- թեր-հերետիկոսապետի» հոգեւոր պրակտիկայի հանգուցային կետերը՝ հեղինակը սեփական տեսակետները եւ մոտեցումները հիմնավորելիս ամենե- ւին չի սահմանափակվում միակողմանի մոտեցմամբ: Զեռել լինելով ծայրահեղու- թյուններից՝ Զակոր արք. Գևճյանը նպատակ է հետապնդել նաեւ իր «... կարողությունների սահմանում վեր հա- նել բարեկարգից դրական կողմերն ու մատնանիշ անել նրա թերությունները եւ այն, ինչ որ ընդունելի չի կարող լինել Զայց. Առաքելական եկեղեցու համար» (էջ 7): Այլ ամենին զուգընթաց՝ հեղինա- կը միաժամանակ հետամուտ է նաեւ «... հայ ընթերցողին հաղորդակից դարձնել Լութերի այն մտքերին, որոնք առիթ են տալիս իրաքանչիւր քրիստոնեայի լր- ջօրէն մտածելու դրանց մասին» (էջ 7):

Այդ համատեքստում Լյութերի առա- ջադրած «եկեղեցու բարեկարգության գրաւոր գործունեություն» ուսումնասիրու- թյանը համահամասար աշխատության մեջ մեծ տեղ է հաստացվել նաեւ Արե- մայան եկեղեցու միության պահպան- ման միտված գործունեության վերլու- ծությանը, փաստական Լյութի ընդհա- նացմամբ բացահայտվել եւ բնական արժեքուման են ենթարկվել «Եկեղեցու միության խորտակման» հոգեւոր եւ հասարակական պատճառները: Միա- ժամանակ հայ աստվածաբանը պատ- մական փաստերի եւ կողմերի բնար- կումների արտացոլող վավերագրերի (Հռոմի Զադրիան 2 պապի առաջարկ- ներ եւ դրանց մերժում, Վիտենբերգի խռովություն, «Յիվկալայի մարգարեներ- ի» գործունեություն, Նյուրնբերգյան ռայխստագ, Ռեգենսբուրգյան համա- ձայնություն, Տորգաւի միություն, գեր- մանական գյուղացիական պատերազ- մի եւ Ռոմա Մյունխենի դեմ պայքար եւ այլն) բնական վերլուծությամբ հան- գում է այն հետեւությունը, որ այդ ամե- նով ոչ միայն «Գերմանիայում սկիզբ էր դրում եկեղեցական միության խոր- տակմանը», այլեւ «Լյութերական բարե- կարգությունը պաշտպանելու» միտու- մով «... գերմանացի ժողովուրդը երկու մասի է բաժանում, եւ հող է պատ- րաստում կատարի պատերազմների» (էջ 333) համար:

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ թիվ 10-11

Հայոց ինքնապաշտպանական մարտերի, դյուցազնական հերոսամարտերի բովո՞ւյն անցած հայրենիները մեր նոր եւ նորագույն պատմության անձնանոթ գիծերն են, որոնց մի մասի անհայտ գերեզմանների, մյուսների հուշարձանների առջեւ պետք է խոնարհվի ամեն մի հայ ու գոտեպնդի նրանց հաղթանակի խոր հավատքով, հայրենիքի ազատության համար կռվով մեռելու պատրաստակամությամբ եւ ազատ ու անկախ հայրենիքի պայծառ տեսիլքով՝ նրա իրական կյանքաման ու զարգացման հեռանկարով:

Նրանցից մեկն է Չեղուշ Փափազյանն էր:

Մոսկվայի համալսարանում բժշկություն սովորելուց հետո Չեղուշը նշանվեց Կոմսի (Վահան Փափազյանի) հետ:

## Նայ կանայք 1915 թ. ինքնադաշտական մարտում



Նրա կամ ամուսնանալու դեպքում պետք է հեռու մար ընտանիքից, սակայն Սոսեն, հակառակ ֆիդայիների առարկության ու Սերոբի հասցեին հնչած մեղադրանքներին, հավատարիմ մնաց ամուսնու՝ վտանգներով իր աստանդական կյանքին:

1897 թ.՝ Բաքվեի կռվից հետո, Սերոբը Սոսեն եւ մի խումբ ֆիդայիների հետ Մշո դաշտից անցավ Սասուն եւ հաստատվեց Գեղեգուզան գյուղում: Այս խումբը հասավ ջարդի սպառնալիքի ենթարկված շրջանները եւ հերոսական խոյանքներով թշնամու ջոհե: Կմբի գործունեության ծիրը հետզհետե ընդարձակվեց Բաղեշից մինչեւ Ալյաթ: Եռների բազե Սոսեն եւ նրանց ֆիդայական խմբի օրինակը վարակիչ դարձավ ոչ միայն տարուստաբույության, այլեւ ամբողջ արեւմտյան հայ երիտասարդության համար, որոնք նրանց հայրենյաց փրկության կոչին պատասխանեցին եւ Սերոբի խմբի մեջ իրեն պայքարող մարտիկներ թողնեցին: 1899 թ., երբ Սերոբը հայ դավաճան Կմբի կողմից թունավորվեց եւ մատուցված շրջապատվեց թուրք զեյապետը հայիկի զինվորների կողմից, կնոջ՝ Սոսենի աջակցությամբ 8 ժամ անընդմեջ կռվեց: Այն բանից հետո, երբ թշնամու գնդակը վերջ դրեց Սերոբի կյանքին, Սոսեն վերցրեց նրա հրացանը եւ շարունակեց կռվել մինչեւ վերջ՝ նույնիսկ այն բանից հետո, երբ իր աչքի առաջ սպանվեցին անդառնալից զավակը՝ 18-ամյա Հակոբը, եւ Սերոբի եղբայրները՝ Չաքարն ու Մյուս: Սոսեն, արցունքները կույ տալով, շարունակեց կրակի տարափը թշնամու վրա մինչեւ ծանր վիրավորվելը: Երբ կի փաշայի զինվորները փորձին երկ պանակ վիրավոր Սոսենին, թուրք հրամանատարը, զարմացած հայ կնոջ հերոսությունից, գործի չի տալիս՝ ասելով. «Այդ կինն իսկական դյուցազուն է»: Նա նույնիսկ կտահարության ծախսերով բուժեց տվեց նրա վերքերն ու նետեց Բաղեշի բանտը: Բանտից ազատվելուց հետո Սոսեն այցելեց ամուսնու գերեզման եւ չիեռացավ երկրից, մնաց ու ապրեց Վանում: «Երիտասարդ, խարոյաշ ու գեղեցիկ այդ կինը՝ պաշկին ու վայելչուկ հասակով, թափ ու վարդազեղ դեմքով, ունեւ շատ հետաքրքիր մի նայվածք, պատկառաղորդ ծախի՝ պարզ, բայց հպարտ, քաղցր ու հեղինակավոր»,- այսպես է բնութագրել նրան Կարո Սասունիի՝ իր «Պատմություն Տարոնի աշխարհի» աշխատության մեջ:

Ի վերջո Սոսեն տարագիր հայության հետ անցավ Կովկաս, հետո՝ Արեւելյան Հայաստան, տեսավ ամուսնու երազանքի իրականացումը՝ Հայաստանի անկախ Հանրապետությունը, ապա գնաց Դուլիս, այնտեղից էլ անցավ Եգիպտոս եւ հաստատվեց Ալեքսանդրիայում, որտեղ էլ 1953 թ. կնոջ իր մահկանացուն: Տարոն աշխարհի դյուցազունների կողքին մեր նորագույն պատմության այս դյուցազունին իր պատվավոր

տեղն ունեցավ. նրա վրիժառության բռնուցքը միացավ մեր ազգային պահանջների համար մյուս հերոս հայրենիների բռնուցքներին, եւ նրա օրինակով շատ կանայք ու աղջիկներ հերոսական մաքառումների ելան ենեզ ոսոխի դեմ՝ հայոց գողգոթայի ճանապարհներին: Այսպիսի հերոսուհիներ էին Նաե Սասունի կողմերում անմահացած կանայք, որոնց, ինչպես գրում է Կարո Սասունի, միշտ էլ աչքի են ընկել իրենց մարտունակությամբ, քաջությամբ, պատվախնդրությամբ, ազատատենչությամբ ու զաղափարական նվիրվածությամբ: Հնարավոր չէ ընկճել սասունցի կնոջ հոգին, ով ուզում է ապրել իր ազատ կամով: Նույնիսկ դժբախտության ժամանակ, որը ու կոծի փոխարեն նա գեթ է վերցնում եւ կռվում թշնամու դեմ: Նշանավոր ֆիդայապետ Գուրգենը, Տարո-

նոն ունեցավ. նրա վրիժառության բռնուցքը միացավ մեր ազգային պահանջների համար մյուս հերոս հայրենիների բռնուցքներին, եւ նրա օրինակով շատ կանայք ու աղջիկներ հերոսական մաքառումների ելան ենեզ ոսոխի դեմ՝ հայոց գողգոթայի ճանապարհներին: Այսպիսի հերոսուհիներ էին Նաե Սասունի կողմերում անմահացած կանայք, որոնց, ինչպես գրում է Կարո Սասունի, միշտ էլ աչքի են ընկել իրենց մարտունակությամբ, քաջությամբ, պատվախնդրությամբ, ազատատենչությամբ ու զաղափարական նվիրվածությամբ: Հնարավոր չէ ընկճել սասունցի կնոջ հոգին, ով ուզում է ապրել իր ազատ կամով: Նույնիսկ դժբախտության ժամանակ, որը ու կոծի փոխարեն նա գեթ է վերցնում եւ կռվում թշնամու դեմ: Նշանավոր ֆիդայապետ Գուրգենը, Տարո-

## Մեծ գիտնականը՝ Լորաչի մասին

Սկիզբը՝ էջ 5

1672-ին ընտրվել է Լոնդոնի թագավորական ընկերության անդամ, իսկ 1703-1723 թթ. եղել է այդ ընկերության նախագահը:

1687-ին հրատարակել է «Բնագիտականության մաթեմատիկական հիմունքները» արժեքավոր աշխատությունը:

Նյուտոնը 1695 թվականից եղել է Դրամահատության տեսուչ, ապա հատուկ որոշմամբ՝ 1699-ից մինչեւ կյանքի վերջը զբաղեցրել է տնօրենի պաշտոնը:

Գիտության մեջ ունեցած խոշոր ներդրման համար 1705-ին նրան շնորհվել է ազնվականի տիտղոս:

Մաթեմատիկական հետազոտությունների հիմնական մասը Նյուտոնը կատարել է ուսանողական տարիներին՝ 1664-1666 թթ.: Նա 23 տարեկանում է մշակել (Գ. Լայբնիցից անկախ) դիֆերենցիալ եւ ինտեգրալ հաշիվը, ստացել ֆունկցիան շարքի վերածելու բանաձևը:



Տարրալուծելով սպիտակ լույսը պրիզմայի օգնությամբ՝ Նյուտոնը բացահայտել է, որ այն յոթ տարբեր գույնի լույսերի խառնուրդ է:

Իսահակ Նյուտոնը մահացել է 1727 թվականին եւ թաղվել անգլիական ազգային պանթեոնում՝ Վեստմինստերյան աբբայությունում:

Նշանավոր գիտնականին առանձնակի հետաքրքրել են նաեւ աստվածաբանությունն ու Սուրբ Գրքի մեկնությունը: Ժամանակակիցների վկայությամբ՝ Նա մեծ հավատ ուներ եւ աստվածավախ էր: Լոնդ 1703 թ. իր զարմիկին՝ Քինգին ուղարկած նամակում հիշատակում է, որ նշանավոր գիտնականն ունի աստվածաբանական փայլուն գիտելիքներ («Исаак Ньютон», М., 1987, էջ 193):

Ուշագրավ է, որ պատմական աղբյուրների համաձայն՝ Անգլիայում ժԵ դարում, որպես կանոն, գրեթե բոլոր հայտնի գիտնականներն ունեին նաեւ աստվածաբանական որոշ գիտելիքներ կամ գոնե ընթերցել էին Սուրբ Գիրքը: Այսպես օրինակ՝ Քոլոջ հրատարակել է աստվածաբանական տրակտատներ եւ հիմնիկ հատուկ ածիքի՝ աթեիզմի դեմ «գիտական» պայքար մղելու համար, նշանավոր մաթեմատիկոս Բ. Քարրոնը հոգեբանական էր, Հոկոզ գրել է աստվածաբանական ուսումնասիրություն՝ Բաբելոնի աշտարակաշինության վերաբերյալ: Նյուտոնի աշակերտների ու ընկերներից ոմանց միևնույն ժամանակ նաեւ աստվածաբաններ էին: Հայտնի է նաեւ, որ Նյուտոնի ազգականներից շատերը հոգեբանականներ էին. կրոնի, աստվածաբանության ու փիլիսոփայության նկատմամբ ունեցած հետաքրքրությունը նրան ժառանգաբար էր փոխանցվել: Պատահական չէ, որ դեռեւս մանկության տարիներին նա ընթերցում էր Սուրբ Գիրքը, քննարկում եւ վերլուծում իրեն հուզող հարցերը:

Նյուտոնի՝ կրոնական բովանդակություն ունեցող բազմաթիվ ձեռագիր աշխատություններ մինչ օրս հրատարակված չեն: Մեծ գիտնականի աստվածաբանական երկերի՝ որոշ չափով ամբողջական ժողովածուի խմբագիրը եպիսկոպոս Չորլսն է. վերջինս մեծ գեղազավորություն է ցուցաբերել՝ հրապարակման համար ընտրելով այն ձեռագրերը, որոնց հետեւիկոսական մտքեր ու տեսակետներ չեն բովանդակում:

Մի փոքր ավելի ուշ անգլիացի օպտիկ Դ. Բրյուսթերը մանրամասնորեն ներկայացնում է Նյուտոնի կենսագրությունը՝ բազմաթիվ նորահայտ փաստաթղթերի հրապարակմամբ: Նա անկեղ պանում է ներկայացնել ու հիմնավորել, որ նշանավոր գիտնականը կատարյալ ու անթերի էր բոլոր ոլորտներում, այդ թվում նաեւ՝ որպես ուղղադավան քրիստոնյա:

Նոր կենսագիր Լ. Մորը որոշակի նպատակադրվածությամբ չուներ. ուսումնասիրելով մեծ գիտնականի արխիվը՝ նա հայտնաբերում է աստվածաբանական բնույթի բազմաթիվ փաստաթղթեր, որոնք խիստ մերժելի են քրիստոնեական ուղղադավան վարդապետության դիտանկյունից:

Հարունակելի  
Երկի ՄԱՆԱՄԱՆ  
Հարունակելի

Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սկիզբը՝ էջ 5

# ԵՂԻՇԵ ՓԱՐԵՆՉ

## ԱՆԽԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՂԱՏՈՒԹՅՈՒՆ

ՍԿԻՂԲԸ՝ ԹԻՎ 11

Ստեղծագործական վիճակն ինքնին դուրս է սովորականից, անսովոր է, ծայրահեղ է և եհեռու է ինքնագաղութնոյցից: Այդ մասին ինքեալ Ղազարուն է գրել: Զարեմեց չէր կարող «Ապստեա-  
կան» ռապսոդիան գրել եւ հաւա-  
գիստ գրութեւ փողոցում: «Ա-  
պստեականք» գրելիս մեկ ուրիշ  
աշխարհից եկածի պէս է եղել  
որ սեյակիցի դուրս է եկել, մտել  
կողոզի սեյակում մարդու մի  
կողմ մտաւ եւ գրուցի բռնելիս  
կտաւ: Մի ամբլակի պատմուի-  
թեան էլ կապակի է այդ պահի-  
թեան: Զեր կարող գրական բուն  
բանավեճերի մէջ լինել պրոլե-  
տարական գրողներին ասոցիա-  
կան մի ամբողջ խմբի հետ եւ  
վերաբերմունքը, հողվածներինց  
բացի, չարտահայտել մարդկա-  
յին հարաբերութիւններին մէջ ու  
Եսիգրաւմներուն: Սա ոչ թէ ան-  
զգապիթեան է, այլ անգլայ բնա-  
կան վիճակ, որովհետեւ Զա-  
րեմեց ապրում էր այնպէս, ինչ-  
պէս գրում էր, գրում էր այնպէս,  
ինչպէս ապրում էր: Ընդուն'ում  
եւե Զարեմցին որպէս հանճա-  
րեղ գրող, ուրեմն արեւել է ընդո-  
ւնէր նաեւ նա Վարդ պաշտ  
դրեւորդուն: Այս ազատութիւ-  
նը երբեմն նոյնիսկ գրական եր-  
կերում անցել է թվայալ  
«պաշտածնոցին» ասիմանը եւ  
թափանցել կյանք անոն խոսքի  
կամ խոսք դարձող կյանքի մէջ:  
Օրինակ՝ Մազգային, Արմիկին,  
Արուսիկ ներկոված շարքեր:  
Մազգայինի հասցեագրածնալ շատ  
բաց կերպագրութիւններ ունե-  
ցող է առաջիկ անտիպ մի տնե-  
տի վրա գրել է. «Ապագա Ֆրոյ-  
դին»:

Հանճարը հուշում է եւ իրեն հասկանալու ուղի է ցույց տալիս, իսկ Չարենցի մասին գրողներն այսօր էլ շարունակում են նրան սեղմել-շրջապատել մտավոր կաղապարների մեջ, ինչի դեմ նա կռվեց ամբողջ կյանքում:

Չարեցից համար ամենամեծ բարոյականությունն ազատու թողնելն էր, կո կամքի ու ներաշխարհի պատշաճորդ դրսեորումը: Դա է լիատեսաղ, որ և օրգա-նապեց էր իսնդորդուն շիննու բարեկերթութան դնմակով քո-ղարկվածներին: Իր օրագրերի մեջ ևս շատ խիստ խոսքեր է ա-նել գրական ևլ բաևի անմանց հասցեին. ինչո՞ւ, որովորդուն տե-սանկետով տարբեր էին, եւ իր կարողանում հանրային ու մշա-կութային եռուն կյանցի մեջ հաշտվել նրանց մարդկային տեղեղագործական առն ու մե-ռյալ խառնվելից ետս:

Ինք՝ Չարեանը, երբեք դիմակ չդրեց, մշտապես այն էր, ինչ կար։ Դրա համար չէր հանդուրժում երկդիմությունը, ներքին ու արտաքին պահվածքի տարբերությունը։ Իսկ նրա շուրջը դիմակավորված մարդիկ էին. դա պայմանակալորված էր ոչ միայն ժամանակի թելադրանքով, այլև նրա բուն մարդկային բնույթով։

Զարեհն իր կյանքը վերածեց  
լեգենդի, դարձավ առեղծված թե՛  
իր ժամանակակիցների, թե՛  
հետևորդների համար, և դա՝ գի-  
տակցական կյանքի առաջին իսկ  
օրերից:

Այդ առերժանում ու լեգենդը պայմանավորված են նրանով, որ Չարենցը կատարեց իր ներքին գանձակերտը մեծ, իր ասանդ պես ղարձակ Վերմոր, իսկ նույնն էլ թե՛ հետամտ: Վերմորը՝ Երեւանի քաղաքի անհայտ քաղաքում, ինչը ոչ թե մայրաքաղաք էր, այլ «մայրաքաղախ» (Գ. Սահարի): Վերմորը՝ մարդկային ու հսկային հարաբերությունների բարբառյալ բարդերի պայմաններում: Վերմորը՝ ազդեցիկ երկրում եւ ակերված անվտանգ տրոլկորի մեջ, ուր բարձր արվեստի պահանջները հասցված էին կանաչ-գույնի, եւ ուր Չարենցն պէս անհատականությունն չգտնեց ի լի-նես, հսկ լիւնտու ղեւանդ է՝ փ-

տի վերաևար (ինչն եւ եղալ): Դա այդպէս է, որովպիտեւ որդոյթան տեղս միշտ էլ միշակուողն է: Միշտ էլ ճաշակներն ու զափա-  
հիշները հարմարեցվում են մի-  
շակին: Միջակ միշտ ընդունելի  
է, որդոյթան տեր, որոշող, կար-  
գադրող: Իսկ համեմար, ի՞նչ ո՛ր  
մնաց Գերմարդը, պիտի ծաղոյի,  
հալածի, պիտի տախէն, որ ևս  
կարծում ունենա որդոյթան տերե-  
րից, այսպէս նրան ամեն կերպ  
պիտի փորձեն կտորել, խեղել եւ,  
ի վերջոյ, չլացակն:

Չարենցն զգում էր իր գերմարդ լինելը: Իր ինքնագնահատությունները դրա ճիշտ վկայություններն էին:

«ԻՆՁ»  
Քո անունի, Չարենց,  
Ասոնասն է՝ «Արեւ» -  
Եվ բառն - հանճարեղ...

Զարեկն իր արժեքն զգում էր թե՛ ազգային մշակույթի, թե՛ համամարդկային քաղաքակրթության մեջ եւ իր մեջ իրենով գնահատում հայոց հանճարը:

Որպես անհատականություն՝ Չարենցը շատ բազմախիտ էր։ Օգտվելով Ուիլյամ Ջեմսի հոգեբանական վերլուծության սկզբունքներից՝ կարող էր հասնել, որ Չարենցի մեջ կայ երեք բնական անհատը, եւ համարային անհատը, եւ հոգեդրո անհատը, ով մշտապես տրվել է ինքնագնահատության (տե՛ս Մ. Джемс, «Психология», М., «Педагогика», 1991, էջ 80-88):

Այս ամենի հիմքը նրա կենսասիրությունն էր, անսպառ ընդգրկունությունը:

Չարենցի բացառիկության ա-  
ռեղծվածը շրջանակված է նրա  
մարդկային նկարագրով, հոգե-  
բանական կերտվածքով եւ մտա-  
ծողության բնույթով: Երեք դեպ-  
քում էլ կա արտաքուստ անհաս-  
կանալի, անբացատրելի մի վի-  
ճակ, ինչն էլ նրա անունն ու գոր-  
ծը պարտիրում են արտասովորու-  
թյամբ:



Զարեցի առեղծվածը պայմա-  
նավորված է նրա ներքին ու ար-  
տաքին ազատությամբ: Այդ ա-  
զատությունն է, որի քի սկզբանե  
շրջապատի համար նրան դարձ-  
րել է պարզականոս: Այդպիսին էր  
ևս էլ մարդկային հարաբերու-  
թյուններում, ե՛լ գրական-աշխա-  
տանքային մառօրյաում, ե՛լ  
ստեղծագործելիս: Նրա հոգես-  
տեղծագործելիս:

Նախկան ազատությունը կանխորոշված է ազատության այն չափով, ինչը ներքին պահանջներով մոտենում է անասանմանությանը, այսինքն՝ ա՛յն, ինչ ունի կյանքն իր երեսացող ու չերեսացող կողմերով: Իսկ Չարենցի ամբողջ ստեղծագործությունն իր կյանքի վեպն է՝ ժամանակի հանրային-քաղաքական իրադարձությունների հարուստ խորանայարով:

Չարենցը ոչ միայն իր տեղն էր  
դրոտում աշխարհում, այլև աշ-  
խարհի տեղը՝ իր մեջ: Աշխարհը  
սրա համար սկզբում Կարսն էր,  
հետո՝ Ջայստանը, ապա՝ Ռու-  
սաստանը, այսուհետև՝ համայնա-  
աշխարհը: Նույն կերպ հոգեւորոր-  
աշխարհը նրա համար սկզբում  
Տեյրանն էր, հետո իր ժամանա-  
կակից ռուս էմիգրացիոն գրող-  
ներն էին, այսուհետև՝ ամբողջ  
համաշխարհային մշակույթը:  
Աստվածաշնչից մինչև XX դար՝  
ընդուպ Տեյրան Ջոյի «Ռդիստան»  
ընթերցել: Չարենցն իր սկզբից ետե-  
րը

զգում էր ամենամեծ չափումսերից գոյացած հարաբերությունների մեջ՝ բանաստեղծ ու աշխարհի, աշխարհի եւ բանաստեղծ:

Աշխարհը նրա համար բնակեցված չէ կենդանի, իրական մարդկանցով, հազեցած մարդկային կյանքը կազմող զգացմունքների անորոշությամբ: Առաջին իսկ բանաստեղծություններից միկնէ վերջինների՝ իրական-առարկայական կյանքը՝ որոշակի անուն ունեցող որոշակի մարդկանցով ու հարաբերություններով: Չառեցը տեղադրվում է գրական տնօրեն: Այդպես նրա տեսնա-գործությունը բնակեցված է սիրելի ու թշնամի գոյություններով, գրական ու քաղաքական դեմբել-ծով է բաքստակ է անցյալ դարձող օտերի կենդանի թոխիով:

Զարեկն շատ հստակ գզում էր պահի ու հավերժության հա-  
րաբերությունը: Ինքն անցըն-  
հատ պահի մեջ էր, ժամանակ  
իրական շարժման մեջ, բայց ե-  
ր, պահի ու ժամանակի շարժման  
մեջ լինելով, մշտապես հավիտե-  
նության հետ էր: Պահը դարձ-  
նում էր հավիտենություն, խո-  
սում էր հավիտենության հետ: Ի-  
նքն տեսնում էր իր գրական ան-  
միջական միջավայրի մեջ, բայց  
ե գզում ճոճերսի, Լարենցադու-  
ր, Ղանտուր, Գյոթեի, Պուշկինի, Ս-  
յուսկինի, Յուսուկյանի, Տերյանի,  
Վյուսկինի կողքին: Լույսը նաեւ  
կենցաղում՝ գրասենյակի առջեւ  
իսկն էր, գրասենյակի դիմաց՝  
Բոլորայի արձանը:

## Շարունակելի

**Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Բանասիրական գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր

# ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Մայր վճռո Բ Ելիմարծի «Խրիմյան» թանգարա- ի տնօրէն, արվեստագետ Շահնէ Խաչատ- ռյանը մայիսի 21-ին Մարտէի Սրբոց թարգ- մանկաց եղեղեցուն կից իրաւիժմով իրավիժ- ված Էր Հայոց եղեղէն 100-ամյակի իշխ- տակման շրջանակներով դասախոսու- թլուն կարգով՝ ցեղասպանութլան արծա- լանքները հալ կերպարկեստուն թմայլով:

վում են Մայր Աթոռի հովանու տակ գործող Ռուբան Սեւակի անվան նորաստեղծ թանգարանում:

Մախոխյանը ծնվել է ՍԵՆ ծովի ափին գտնվող Տոապիզոն քաղաքում: Նախնա-

կանապես ամրապնդել են նրա՝ ծովա-  
կարգությամբ զբաղվելու ձգտումները: 27  
տարի Բեռլինում ապրելուց եւ եվրոպա-  
կան տասնյակ քաղաքներում ցուցադր-  
վելուց, բացում մոգականների առժամա-



Հաջորդ առավուտ հաշատրոյանի ելոյթից ազդված մարստեաբնակ Տիգրան-Արմանոյ Մուրաֆյանի իր տուն ե հրավիրուոն նրան ե ցոյց տալիս հայտնի վարպետ, ծովակալ-հրէ վարդան Մախոխյանի (1869-1937) երեք պատկերները ե ի ստորե նկիրելով Մայր Աթոռ Սբ Էջմիածինի՝ խնդրել ե նկիրատվութուններ տեղ հասցնել:

Եվ ահա այս ներհուլիչ ծովանկարներն արդեն ժամանակավորապես գուլաղո-

կան կրթությունն ստացել է Կարսի Սահասարայան վարժարանում, ապա մեկնել է Գերանասիա, ընդունվել Բեռլինի Գեղարվեստից ակադեմիա, աշակերտել ընանկարիչ Օյգե Բրախտիս, որից հետո՝ Լորդեզացի ծովակարիչ Հանս Գուդիցի՝ 1894 թ. մեկնել է Ղրիմ, ծանոթացել Հովիվ Այվազովսկու հետ։ Հանձարել ծովակարիցի հետ բարեկամությունը, շփումները, գույուսները, խոսիտուկները մեղսեցան

Նալույց, շատ ու շատ երկրներում ճամփորեկուց հետո վերջնականապես հանձնարված է գտել Ֆրանսիայի՝ Միջերկրական ծովի կամարները Նիցաց քաղաքում, ուր կային իր հոգու պահանջները բավարարող բոլոր հնարավորությունները՝ ծովի իր բոլոր «կերպարանախոյունները»։ Մախիթյանը ոչ միայն փարիզյան «Մալուխ» ցուցահանդեսների ապոլիդ մասնակից էր, արեւ իր աջակցությունը

Մայր Աթոռ Սբ Էջմիածնիս կաթարեղ-  
ված կտակները եւս կկարգի անկերէ նե-  
րապարուսների ծնունդ եւս նրա բազում  
ծովակարների ունէ ունէ իրենց արմատի  
տեղը: Ժայռոտ ծովափեր ներկայացնող  
այս երեք պատկերները, որոնք նաեւ կկար-  
գի հոգեկան վիճակները, խափարցող դեպի  
լույս ձգտելու բուն ձգտումներից եւս, այ-  
սոր այլեւս հայոց հոգեւոր տան ամենեւե-  
րին սեփականութուն եւս:

U. U.

1915

թ. հունվարյան «Արարատում» հրապարակված է Ամենայն Հայոց Գեղորդ Ե Սուրենյանց Կաթողիկոսի 1914 թ. դեկտեմբերի 28-ի թիվ 1990 հայրապետական կոնդակը:

«Հարձեալ լսեմք ի Հայաստան աշխարհէ գործք եւ զաղաղակա անօգնական եւ անպաշտպան սիրելի զաւակաց: Փոտեք արդէն, զի ի վերջին աւուրս յանկարծակի թշուառութիւնք եւ սոսկալի արհալիրք եկին հասին ի վերայ զաւակացս, յորոց բազումք թողեալ զհայրենի տունս եւ զամենայն ստացուածս իւրեանք ի Տաճկա-Հայաստանի եւ յԱնուպատականի, սարափախար եւ իշխակորոյս լեալ, փախեան ի ասիանոս մեր եւ այսոր հազարաւոր թշուառ կանայք եւ անեղ մանկունք եւ ծերք, ժողովեալ աստ ի Ս. Էջմիածին, ընդ հովանեաւ Սարգի Սթորոյս, խնորհել ի Մէջը Գազուլթիւն»,- ասվում էր կոնդակում:

Այս կոնդակով Կաթողիկոսը Մայր Աթոռում հիմնում էր եղբայրական օգնության կարգադիր հանձնաժողով՝ նշանակելով անդամներ 3 եպիսկոպոսի եւ 3 վարդապետի: Ս. Էջմիածնի կարգադիր հանձնաժողովը, իբրեւ դեկավար մարմին եղբայրական օգնության տեղական հանձնաժողովների, կոչված էր լինելու ամենաբազմապիսի աջակցություն ցուցաբերող հայ գաղթականների:

Տեղական առաջին հանձնաժողովներ կազմակերպվել էին ավելի վաղ: Դեռ 1914 թ. նոյեմբերին Կաթողիկոսի հանձնարարությամբ Երեւանի փոխթեմական Խորեն եպիսկոպոս Սուրբաբեկյանը, Հովհաննես Թումանյանի, Շիրվակապետի, Երեւանի քաղաքագլուխ Ամբաստանապետ Գևորգի Լեւոնյանի եւ Թիֆլիսի Լեւոնյանի դպրոցի տեսուչ Հովսեփ Խուրանցիի հետ մեկնելով Իզդիլ, տեղում կազմակերպել էր եղբայրական օգնության հանձնաժողով, որը պետք է ընդուներ եւ առաջին օգնություն ցուցաբերող գաղթական առաջին խմբերին: Հետագայում, ինչպես տեղեկանում ենք «Արարատից», երբ «փախստական-գաղթական տաճկահայերի հոսանքը սկսուեց՝ Վեհափառի հրամանով Իզդիլ ուղարկուեց Ս. Քարեթի վարդապետը՝ տեղական Յանձնաժողովի հետ ընդունելու եւ պատասխանելու թշուառ գաղթականներին եւ կազմակերպելու նրանց փոխադրությունը գործը: Իսկ Արիստակես վարդապետն էլ զնաց Սարգարա գիւղը՝

## Հայոց ցեղասպանությունն «Արարատի» էջերում Եղբայրական օգնություն գաղթականներին եւ 70-ամյա կնոջ 3 ռուբլին

Արաքսի եզերքը, այնտեղ սնունդ մատակարարելու եկող գաղթականներին եւ ճանապարհելու Ս. Էջմիածին. իբրեւ օգնականներ Սարգարա գնացին Սարգարապատի գործակալն եւ ճեմարանի ուսանողները»:

Դեկտեմբերի վերջին, երբ լուրեր են տարածվում նոր գաղթական խմբերի մասին, անհրաժեշտ է դառնում կազմակերպել նոր հանձնաժողովներ: Ստեղծվում է Ս. Էջմիածնի եղբայրական օգնության կարգադիր հանձնաժողովը, ինչպես նաեւ՝ տեղական հանձնաժողովներ Երեւանում,

դապետը, Ալեքսանդրապոլի Յանձնաժողովն էլ գործում է Ս. Արտակ վարդապետի նախագահությամբ»:

Գեղորդ Ե Կաթողիկոսը դեկտեմբերի 28-ի հայրապետական կոնդակով եղբայրական օգնության կարգադիր հանձնաժողովի անդամներին հրահանգում էր տեղական հանձնաժողովների հետ համագործակցաբար տեղում կազմակերպել իրենց բնակավայրերը լքած հայ գաղթականների մասին, նրանց ցուցաբերել բժշկական, նյութական եւ հոգեւոր աջակցություն:



Հին Նախիջեանում եւ Ալեքսանդրապոլում:

1915 թ. հունվարին արդեն այս մասին «Արարատը» գրում է. «Բոլոր գաղթականներին խնամելու համար կան տեղական «Եղբայրական օգնության Յանձնաժողովներ» Վեհափառ Հայրապետի բարձր հովանաւորութեան ներքո: Ս. Էջմիածնում Վեհափառի 28-ի կոնդակով կարգուած է «Եղբայրական օգնության» Ս. Էջմիածնի գլխավոր կարգադիր Յանձնաժողովը, որի անդամներն են Ս. Տ. Եփրեմ, Բագրատ եւ Մատթէոս եպիսկոպոսներ, Ս. Տ. Քարեթի, Բաբգէն եւ Կորնէս վարդապետներ: Երեւանի Յանձնաժողովը գործում է Ս. Խորեն եպիսկոպոսի նախագահութեամբ, Հին Նախիջեանի Յանձնաժողովը Ս. Ներսէս եպիսկոպոսի նախագահութեամբ, իսկ Կիլիկիայի Նախագահն է Ս. Սիւն վարդապետը»:

«Յանձնաժողովի անդամները մի կողմից հայ էին մատակարարում, տաք կերակուր, թէ տալիս եւ երկու երեք օր հանգստանալուց ու տաք շորեր տալուց յետո՛ւ՝ նրանց ճանապարհում էին Էջմիածնի զաւտիկ հայաբնակ գյուղերը»,- տեղեկանում ենք «Արարատի» ապրիլ-մայիս համարից:

Այս առումով ուշագրավ է 1915 թ. հունվարի 24-ին Մայր Աթոռում կայացած եղբայրական օգնության կարգադիր հանձնաժողովի նիստի արձանագրությունը՝ գյուղերում օգնականներին խնամելու եւ սննդի գործի կազմակերպության վերաբերյալ: Ինչպես տեղեկանում ենք այս գեղուցագրից, փորձ էր արվում անել նախաժամիրկն առավագույնը բոլոր խնդիրներին համակարգային լուծում տալու համար: Իսկ առավագույնը հետեւյալն

նական գաղթական եղբայրներին:

«Լիայոյս ենք եւ հաւատամք, զի հոգեւոր եւ սիրելի որդիք մեր, որպէս ցարդ նոյնպէս եւ յետ այսորիկ, ի նկատի առեալ զանչափ պահանջս եւ զբազմադիմա կարիս Հայոց Վասպուրականի, Սանազկերտի, Ալաշկերտի, Բասենի, Բաղէշի, Տարնոյ եւ այլ վայրեաց Հայաստանի, օգնեցնել լիառատ նուիրատուութեամբ իւրեանց յօգուտ եւ սփռուած տարաբախտ եւ բազմաբախտ որդուց մերոց, որք այսօր ի ճոխային պայմանս անցուցանեն զաւուրս իւրեանց»,- մասնավորապէս ասվում էր Կաթողիկոսի 1915 թ. հուլիսի 10-ի կոնդակում:

Օգնություն ձեռք էին մեկնում հայաշատ բոլոր քաղաքներից: 1915-1917 թթ. «Արարատի» համարներում մանրամասն բաւերելուց ետք հրապարակված են հայ գաղթականների օգտին Մայր Աթոռ ուղարկված բոլոր հաշիվները, նվիրատուների անունները:

3 միլիոն 187 հազար 778 ռուբլի եւ 65 կոպէս, այսպիսին է երեք տարիների հանգանակաւորների վերջնական հաշիվը:

Նվիրատուների ցուցակում մեզ հայտնի եւ անհայտ բազմաթիւ անուններ են, ազգային, եկեղեցական եւ օտար կազմակերպություններ: Նրանցից, սակայն, ինչպես 1915 թ. «Արարատը», այնպես էլ այսօր մենք, չենք կարող չափանշաններով 70-ամյա շուրջի ծամարա հաշտարկանքին: Այսօր էլ չափազանց սրտաշարժ է ինչպէս Հայոց Հայրապետի ուղղած նրա նամակը, որ հրապարակել է «Արարատը»: Նամակում աղջտա եւ անօգնական կիւնը պատմում է, թե ինչպէս է իր տկար մարմնով կարողացել հայթայթել օգնության դրամը:

«Ինքս 70-ամեայ մի պառաւ եւ արջատ կին եմ, մեր ազգի տառապանքները ինձ անչափ ցաւ են պատճառում, բայց ձեռքով ոչինչ անել չի գալիս: Ուստի իմ մէջքով 300 կոմ ջուր կրելով եւ վաճառելով, ստացել եմ 3 ռուբլի (կուռք 1 կոպէկով), որը ուղարկում եմ Ս. Օծուրեանի, խնամարարք խնդրելով գործադրել ըստ Ձեր բարեհայեցողութեան»,- իբրեւ Կաթողիկոսի խոսքի ծառա՝ գրում է շուշեցի կինը:

Սա աստվածաշնչյան այրի կնոջ կենդանի օրինակն է՝ իբրեւ խրատ ու դաս բոլոր ժամանակների մարդկությանը:

Հեղինակ ՄԱՐՏԻՆ

## ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ «ՄԱՐՏԻՆ ԼՈՒԹԵՐ» ՄԻ ԲԱՐԵՊԱՇԵՑ ՎԱՆԱԿՆԻ ԸՄԲՈՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սկիզբ՝ էջ 5

Անդրադարձնալով յուրաքանչյուրի մարդկային պայմանների եւ «բողոքական» անվան ստուգաբանությանը՝ Հայկո արք. Գլխաւոր մատնանում է Հայալիքի առաջին եւ երկրորդ ռալիստազներին դերը եւ փաստերի ընդհանրացմամբ եզրակացնում. «1529 թ. Հայալիքի ռալիստազի ապրիլի 19-ի նիստում յուրաքանչյուրին իրենց կատարած բողոքների պատճառով կոչւում են բողոքականներ»: Այդ օրուանից սկսած այլեւ բացահայտ էր դարձել, թէ Գերմանիան բաժանուել է երկու մասի՝ կաթոլիկ եւ թողութական» (էջ 386): Հեղինակն այդ համատեքստում է քննարկում նաեւ Էրազմ Ռոտերդամացի - Մարտին Լյութերի հակամարտությունը, ինչպէս նաեւ՝ Մարտին Լյութեր - Ուլրիխ

Յվիլգիլի առնչությունները, ուր առանձնահատուկ քննարկման նյութ է դարձնում շվեդացարական եւ գերմանական բարեկարգիչների վարդապետական ըմբռնումները, որոնք պատմությանը հայտնի են «Մարտիրոսյան հոդվածներ» վերտառությամբ (որտեղ ճշգրտված չէ միայն իրական Գոյափիլոսոփայն խորհրդի՝ «Տիրոջ Մարմնի եւ Արեան» դավանական ըմբռնումը, էջ 398-400):

Քննարկվող աշխատության արժանիքների շարքում պետք է թվարկել նաեւ թուրքերի եւ թուրքական արշավանքների նկատմամբ Մարտին Լյութերի ունեցած վերաբերմունքի քննական արժեւորումը: Այդ նպատակով հեղինակը ոչ միայն անդրադառնում է Լյութերի «Յաղագս պատերազմին ընդդէմ թուրքաց», «Յոգորդ աղօթից» ընդդէմ թուրքաց» աշխատություններին

նկատմամբ Լյութերի դիրքորոշմանը: Եվ փաստական նյութի վերլուծությամբ Հայկո արք. Գլխաւորը հետեւողական մոտեցմամբ բացահայտում է այս հարցում Լյութեր բարեկարգիչ մոտեցումների հիմքերը եւ անդրադառնալով թուրքերի, Լյութերի խոսքով ասած, «դեւերի մի հսկայ զանգաւածի» դէմ «գեներով եւ զաղափարախօսական» պայքար ծավալելու անհրաժեշտությանը՝ հանգամանորեն քննական արժեւորում է ենթարկում եւ գնահատում յուրաքանչյուր այդ մոտեցումների հիմքում ընկած հոգեւոր կողմնորոշիչները, մատնանում դրանց դրական եւ անընդունելի կողմերը:

Հարուկակէի  
Մուշական եպս ԺԱՄԱՐՏԻՆ

## ԵՐԽՍՏՈՒՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրօնական, մշակութային, լրատվական երկաթաբաթեր

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ

Էջմիածին

Հրատարակիչ՝

«Երիտասարդ Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Մատիկ Ստամբուլյան

Գրական վարչական՝ 624

համագործակցական հասցէ՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gh@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 2.7.2015 թ.

Տպագրական՝ 2100

Գինը՝ 50 դրամ